

**ԲՆԱԳՐԵՐ ԵՒ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԵՐ
*TESTI E STUDI***

ՏՎ

ՎՐԱՑ ԵՒ ԱՂՈՒԱՆԻՑ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ ԸՆ
ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿՈՒԽՈՒ ՏՈՄԱՐԻ¹

Յայտնի է, որ 666-667 թուականներին Հայոց կաթողիկոս Անաստաս Ակոբեցու յանձնարարութեամբ, ժամանակի մեծագոյն դիտնական Անանիա Շիրակունին² ստեղծել է «Քննիկոն» կո-չուած իր կոթողային աշխատութիւնը, որ եղել է Հայաստանի բարձրագոյն դպրոցների համար նախատեսուած նոր դասագիրք (Երբեակ եւ քառեակ գիտութիւններն ընդգրկող նոր ուսումնական ծրագրով): Այս աշխատանքում, բացի եօթ ազատ արուեստներից (նախ քառեակ, ապա երրեակ գիտութիւնները), ի թիւս այլ կիրառական գիտութիւնների, շարադրուել է նաեւ օրացոյցը (Տոմար): Անանիայի Տոմարը բաղկացած է եղել տեսական մասից եւ կիրառական մասից:

Անանիայի Տոմարի տեսական մասում բացարութիւններ եւ հիմնաւորումներ են տրուել եկեղեցական այն տօների օրացուցային դրութեան վերաբերեալ, որոնց սահմանումները Հայաստանեաց եկեղեցում տարրելուում էին արեւմտեան եկեղեցիների նոյն

1 Սոյն աշխատութեան համարու տարրեարակը զեկուցուել է 2018 Նոյեմբերի 2ին Սոսկուայում ՌԴԳԱ Արեւելագիտութեան ինստիտուտի 200ամեակին նույրուած «Կովկասեան Աղուածիքը Եւրասիայի պատմական և մշակուրայիթ տարածութեան մէջ» միջազգային գիտաժողովում։

2 Սյու հեղինակի անուելը տարրեր կերպ է տրուել հայկական մշնադարեան տարրեր աղբիւրներում։ Անանիա Շիրակացի, Անանիա Շիրակունի, Մեծն Անանիա, Անանիա Համարող, Անանիա Շիրակաւանցի, Անանիա Անեցի եւ այլն։ Իր գրութիւններում նա իրեն անուանում է «Անանիա որդի Յովիաննելս Շիրակունու (Յովիաննելսի Շիրակայնոյ)»։ Աս հաշակում է, որ Շիրակունին նրա ազգանունն է (այսինքն՝ նա ազգուականի կում է, որ Շիրակունին նրա ազգանունն է (այսինքն՝ նա ազգուականի որդի է եղել)։ Շիրակունի անուանով նրան յիշասակում են նաև վաղ միջնադարի հեղինակներ Գրիգոր Մագֆաստրոս Պահանունին եւ Յովիաննելս Անրիկաւագը։ Դրանից ելեւելով՝ այսունզ կը կիրառեմ Անանիա Շիրակունի անուելը, չնայած այն բանին, որ Ժամանակակից գրականութեան մէջ նա աւելի շատ յայտնի է որպէս Անանիա Շիրակացի։

սահմանումներից (Աստուածայալոնութիւն, Զատիկ, գուցէ նաեւ որոշ այլ տօներ): Անանիայի Տոմարի կիրառական մասը բաղկացած է եղել երկու հիմնական մեծ աղիւսակներից՝ Խառնախորանից եւ 532ամեայ Զատկական աղիւսակներից, բազմաթիւ օժանդակ աղիւսակներից եւ բացատրական շարադրանքներից:

Անանիայի Տոմարում ներկայացուել են եղել այդ ժամանակուայ 15 քրիստոնեայ ժողովուրդների օրացոյցերը՝ ներառեալ Վրացիների եւ Աղուանների օրացոյցերը: Անանիայի Տոմարը իր այլ արժանիքներից զատ, նաեւ արժէքաւոր աղբիւր է՝ դրանում պարունակուող 15 ազգերի օրացոյցերը հասկանալու համար, ներառեալ վերոյիշեալ երկուուր: Եթէ Վրաց օրացոյցը հասկանալու համար, բացի Անանիայի Տոմարից, տեղիկոյթ կարող ենք ստանալ նաեւ յետագայ դարերի այլ (վրացական) աղբիւրներից, ապա Աղուանից տոմարի պարագայում, Անանիայի այս աշխատանքը շարունակում է մնալ միակ հնարաւոր աղբիւրը:

Վրաց եւ Աղուանից օրացոյցերը Անանիայի Տոմարում ներկայացուած են «Խառնախորան» բաժնում: Անանիայի Խառնախորանը 12 մեծագիր աղիւսակների հաւաքածու է, իւրաքանչիւրը՝ (Հռոմէական) տարուայ մէկ ամսուայ համար: 12 մեծ աղիւսակներից զատ այստեղ եղել են նաեւ Լուսնի փուլերը, Արեւի բարձրութիւնը, ցերեկուայ եւ գիշերուայ տեւողութիւնը եւ ցանկացած տարուայ իւրաքանչիւր օրուայ աւուր պատկերը որոշելու օժանդակ աղիւսակներ: Եղել են նաեւ բոլոր ընդգրկուած օրացոյցերի ամիսների աղիւսակներ՝ իւրաքանչիւր ամսուայ օրերի քանակով, կրկնակներով եւ որոշ այլ մակաշափերով: Խարնախորանում զուգահեռ ներկայացուած են 14 քրիստոնեայ ազգերի օրացոյցները՝ Հռոմէացիների, Յոյների, Ասորիների, Հրեաների, Արաբների, Մակեդոնացիների, Եգիպտացիների, Եթովպացիների, Աթենացիների, Բիւթանացիների, Կապադովկացիների, Վրացիների, Աղուանների եւ Պարսիկների⁴: Հայկական տոմարը ներկայացուած է եղել ոչ թէ Խառնախորանում, այլ Հռոմէական օրա-

3 Տե՛ս, օրինակ, BROUTIAN, G., *Persian and Arabic Calendars as Presented by Anania Shirakatsi in Tharikh-e Elm Iranian Journal for The History of Science*, 2009, № 8, 1-17.

4 Քրիստոնեայ ժողովուրդների շարժում այստեղ Յշուած են նաեւ Հրեաներ, Արաբներ եւ Պարսիկներ, որոնք այսօր յայտնի են որպէս ոչ քրիստոնեայ ժողովուրդներ: Նկատենք, սակայն, որ Անանիայի ժամանակներում այդ ժողովուրդներն ունեցել են լաւ կազմակերպուած քրիստոնեական համայնքներ՝ իրենց նույրապատական կառույցներով, որոնք ընդհանուր Քրիստոնեական նկեղեցու մաս են կազմել:

ցոյցին զուգահեռ՝ Զատկի եւ եկեղեցական այլ տօների 532ամեայ աղիւսակներում։ Խաւնախորանում ներկայացուած բոլոր օրացոյցների համար նշուել են տարուայ սկիզբը ու բոլոր ամիսների սկիզբները, ինչպէս նաև հիմնական անշարժ տօների օրերը, արեւադարձերն ու գիշերահաւասարները⁵։ Առանձնայատուկ հետաքրքրութիւն են ներկայացնում տարբեր օրացոյցերի ամիսների անունները։ Այս անունների մէջ յատկապէս մեծ նշանակութիւն ունեն Աղուանքի օրացոյցի ամիսների անունները (ի մասնաւորի՝ լեզուաբանների համար), որպէս աղուաներէն լեզուի հազուագիւտ մասունքներ, եւ այս տեսանկիւնից դրանք ենթարկուել են յատուկ ուսումնասիրութեան⁶։

Ստորեւ ներկայացնում ենք վրացական եւ աղուանական ամիսների անուններն ըստ Անանիայի Տոմարի։

Վրացական ամիսներն ըստ ՄՄ թիւ 1973 եւ 1999 ձեռագրերի⁷

	Վրացական ամիսներ		Օրերի թիւը
	ՄՄ 1973	ՄՄ 1999	
1	Ախալծերի	Ախծելի	30
2	Սրիլի	Սիրիլի	30

-
- 5 Հաւանարար, Անանիայի Խառնախորանի հեղինակային տարրերակում նըշուած են եղել նաև այն տեղերը, որտեղ ներմուծուել են նահանջ տարրիներին յաւելուող նահանջի օրերը՝ ներկայացուած իւրաքանչիւր օրացոյցի համար (տե՛ս նաև ասորեւ՝ ըստ կազմի)։
- 6 Ա.ՂԱՅԵՆՆ, է., Աղուանական ամիսների անունները, Տեղեկագիր Հայկ ԽՎՀ ԳԱ, հասունական գիտուրի մենակ, 1946, թիւ 5, 61-64։ Այս յօդուածում հեղինակը զիտուրի մենակը, որ Աղուանից ամիսների անունները մեզ են հասել միայն Մերոպ Մաշտոցից անուան Մատենադարանի երկու ձեռագրերում (այսուհետ՝ ՄՄ) թիւ 1973 եւ 1999 (էջ 61)։ Սակայն նշուած ձեռագրերը միայն երանք են, որոնցում ներկայացուած են տարրեր ժողովուրդների ամիսների անունների ցուցակները։ Աղուանական ամիսների անունները, ինչպէս նաև մեացեալ 13 ժողովուրդների ամիսների անունները, բացի նշուած ձեռագրերից, համերիպում են նաև այլ ձեռագրերի որոշ խառնախորաններում (օրինակ՝ ՄՄ թիւ 817, 2001 եւ 2068 ձեռագրեր), հետևարար, այս ձեռագրերը (ինչպէս նաև մանրամասն խառնախորաններ պարունակող այլ ձեռագրեր) կարեւոր աղբիւներ են տարրեր ժողովուրդների (ներառեալ՝ Աղուանից) ամիսների անունները հասկանալու համար։
- 7 ԱԲՐԱՀԱՄՄԵՆՆ, Ա., Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, ՀՍԽԻ Մատենադարանի հրատարակչութիւն, Երևան 1944, 119։

3	Տիրիսդին	Տիրիսդի	30
4	Տիրիսդինի	Տիրիսդենի	30
5	Ապանի	Ապանի	30
6	Նուկնի	Նունկնի	30
7	Մելրանի	Նիլրանի	30
8	Խգրիկա	Խգրակա	30
9	Վարդոպա	Վարդուպ	30
10	Տրելի	Մարիլի	30
11	Քուրա	Քուրա	30
12	Քուրաբալուրա	Քուրալուրա	30

Աղուանից ամիսներն ըստ ՄՄ 817, 1973, 1999, 2068 ձևոագրերի⁸

	Աղուանից ամիսներ				օրերի թիվ
	ՄՄ 1999	ՄՄ 1973	ՄՄ 817	ՄՄ 2068	
1	Նաւասարդուն	Նաւասարդուն	Նաւասարդ[դ...]	Նօսարդոն	30
2	Տուկն	Տուեն	Տուկնի	Տուկնի	30
3	Նամոց	Կամոց	Նամայ	Նամայ	30
4	Շիլի	Ցիլէ	Ցիլի	Ցիլի	30
5	Բոկաւոն	Բոկաւոն	—	Բոկաւոն	30
6	Մարէ	Բիթուկէն	Մարէ	Մարէ	30
7	Բոնկոնէ	Մրելի	Բոնկոն	Բոնկոն	30
8	Ծախուէն	Ծախուլի	Ծախուէն	Ծախուէն	30
9	Բունդուկէ	Բոնդուկէ	Բոնտուկէ	Բոնտուկէ	30
10	Որելին	Որելին	Որբելին	Որելին	30
11	Եխնեայ	Եխնայ	Էխնեայ	Էխնեայ	30
12	Խարնեայ	Խիքնայ	Խարայ	Խարայ	30

8 ՄՄ 1973 և 1999 ձևոագրերի ամսանունները տրուած են ըստ Աշ. Արքահամեանի (Աշ., աշխ., էջ 118), իսկ միւսները բաղրուած են համապատասխանաբար՝ ՄՄ 817 (թերք 446ր-458ա) և ՄՄ 2068 (թերք 360ր-372ա) ձևոագրերից: Այս աղիւսակում ՄՄ 817 ձևոագրից բաղրուած ամսանուններից առաջինը թերի է բառավկրչից (վերջին տառերը չեն կարդացւում թերի մաշուածութեան պատճառով), իսկ եթեգերորդը լրի է բացակայում (նոյն պատճառով):

Այս երկու օրացոյցներում էլ աստ բերուած 12 ամիսներից յետոյ տարեվերջում դրուել են 5-ական յաւելեալ օրեր՝ «Աւելիք», կամ «Աւուրք աւելեաց» ընդհանուր անունով։ Այս կերպ տարեշրջանի ընդհանուր տեսողութիւնը դառնում է $365 \text{ օր} \times 12 \times 30 + 5 = 365$ օր կառուցուածքով։

Կառուցուածքային ընդհանուրութիւնից զատ, այս երկու օրացոյցներն ընդհանուր են նաեւ նրանով, որ երկուսն էլ Անանիայի Տոմարում միաւորուած են մէկ մեծ խմբի մէջ, որտեղ կան եօթ ապերի օրացոյցներ։ Դա այսպէս կոչուած՝ «Եգիպտացւոց» խումբն է։ Խառնախորանի մէջ այդ խմբի բոլոր օրացոյցները ներկայացուած են մէկ միասնական սիւնակով, որ ունի «Եգիպտացւոց եւ իւրոց» վերտառութիւնը⁹։ Այս խմբի բոլոր օրացոյցները ունեն ամսամուտերի եւ, բնականաբար, նաեւ տարեմուտի համբնկում։ Արանց բոլորի տարեմուտը Օգոստոսի 29-ն է։ Այս խմբի մէջ են Եգիպտական, Եթովպական, Աթենական, Բիլթանական, Կապաղովկիական, Վրացական եւ Աղուանական օրացոյցները։ Բնականաբար, միեւնոյնը պիտի լինի նաեւ նահանջ տարիների համակարգը այս խմբի բոլոր օրացոյցներում։

Արդ, եթէ գանձ նահանջների համակարգին, ապա ակնյայտորէն այս օրացոյցներում պիտի 4 տարին մէկ ներմուծուէր նահանջի օր, ինչպէս Հռոմէական Յուլեան օրացոյցում է։ Այլ կերպ անկարելի պիտի լինէր ունենալ Հռոմէական ամիսների հետ կայուն գուգաւորութիւն։ Իսկ դա ներկայացուած է Խառնախորանի մեզ հասած բոլոր տարբերակներում։ Պարզ չէ միայն այդ նահանջի օրուայ տեղը։ Եթէ Խառնախորանի որոշ ընդարձակ տարբերակներում կայ յասուկ նշում Հայոց Սարկաւագադիր օրացոյցի նահանջի օրուայ տեղի վերաբերեալ¹⁰, ապա Եգիպտական խմբի օրացոյցների վերաբերեալ այլպիսի նշում յայտնի չէ։ Զըկայ նահանջի օրուայ առկայութեան որեւէ ակնարկ նաեւ տարեվերջում դրուող աւելեաց օրերից առաջ կամ յետոյ։ Եգիպտական խմբի բոլոր օրացոյցների աւելեաց օրերը սկսում են Օգոստոսի 24ին եւ աւարտում Օգոստոսի 28ին, տարեմուտն էլ բոլորի

9 Տե՛ս ԲՐՈՒՏԵՑԱՆ, Գ., Անանջիա Շիրակացու «Խառնախորանը», Մայր Արքուն Ս. Էջմիածին 1998, էջ 86-109։

10 Մարտի 8-ի դիմաց Մարտ ամսի աջ էջում Սարկաւագի խմբագրած Խառնախորանում գրուած է. «Հայք զաւելորդ Ասհանցին աստ դնենք։ Տն՛ս, օր՝ ԲՐՈՒՏԵՑԱՆ, Գ., Օրացոյց Հայոց, Մայր Արքուն Ս. Էջմիածին 1997, էջ 126-127-ի Ակարը։

Համար Օգոստոսի 29ն է, իսկ տարրուայ վերջին ամիսն էլ աւարտում է Օգոստոսի 23ին¹¹: Այսինքն, տարեվերջից մինչեւ յաջորդ տարեմուտ հատուածում նահանջի օրուայ համար տեղ չկայ:

Ելնելով նրանից, որ Անանիայի Խառնախորանի մէջ տարրուայ բոլոր օրերի համար անփոփոխ է Հռոմէական եւ Եգիպտական խմբի օրացոյցների օրերի զուգաւորութիւնը, պէտք է այս խմբի օրացոյցների նահանջի օրուայ տեղը համարել Հռոմէական Փետրուարի վերջին ամենամօտ Եգիպտական ամսամուտին նախորդող օրը, որ է Փետրուարի 25ը: Սովորական տարիներին Փետրուարի 25ին սկսում է Եգիպտացւոց եօթներորդ՝ Պեմենովք (Վրաց նիկրանի եւ Աղուանից Բոնկրնել) ամիսը: Ուրեմն հէնց Պեմենովք (Վրաց նիկրանի եւ Աղուանից Բոնկրնել) ամսի ամսամուտից անմիջապէս առաջ էլ պիտի լինէր 4 տարին մէկ դրուող նահանջի օրը: Այս կերպ նուազագոյն կը լինէր Հռոմէական եւ Եգիպտական խմբի օրացոյցների օրերի զուգաւորութեան խախտումը նահանջ տարիներին: Կը խախտուէր միայն Փետրուարի 25ից Մարտի 1 միջակայքի օրերի զուգաւորութիւնը: Իսկ Մարտի 1ից մինչեւ յաջորդ տարուայ Փետրուարի 24ը միջակայքում այդ զուգաւորութիւնը դարձեալ կը լինէր կայուն:

Իրոք, հէնց այսպիսի պատկեր ենք տեսնում Մաշտոցեան Մատենադարանի թիւ 2068 ձեռագրով (ԺԵ. դար) մեզ հասած Խառնախորանի մէջ: Սա Անանիայի Խառնախորանի՝ մեզ հասած ամենաընդարձակ եւ ամենալի օրինակներից մէկն է, որ ժԱ-ԺԲ. դարերում խմբագրած է եղել Յովհաննէս Սարկաւագի կողմից: Այս խառնախորանում նշումներ կան բոլոր ազգերի օրացոյցների նահանջի օրուայ տեղի մասին: Զոր օրինակ, Մարտ ամսուայ էջում Մարտի 8ի դիմաց նշուած է Հայկական Սարկաւագի օրացոյցի նահանջի օրը այդտեղ զնելու մասին: Աւա, ՄՄ 2068 ձեռագրի Խառնախորանի Փետրուար ամսի էջերում (361ը, 362ա) Փետրուարի 24ի դիմաց աղիւսակի աջ կէսում նշուած է: «Եգիպտացին եւ իւր է. ազգն զաւելի օր Աահանջին աստ դնեն», այսինքն, Եգիպտական խմբի 7 ազգերի օրացոյցների նահանջի օրը դրուած է ալլտեղ:

Եգիպտական խմբի օրացոյցների, եւ ի մասնաւորի՝ Վրաց եւ Աղուանից օրացոյցների առաւել ամբողջական ընկալման համար հարկ է պատասխանել հետեւեալ հարցերին.

11 Տե՛ս ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Ամամիա Շիրակացու «Խառնախորանը», 62. աշխ., էջ 100-101:

ա. Ո՞րն է այս օրացոյցների ընդհանրութեան պատճառը,
բ. Ե՞րբ է սկիզբ առել այդ ընդհանրութիւնը:
գ. Կա՞ն արդեօք այլ ընդհանրութիւններ Վրաց եւ Աղուանից օրացոյցների եւ մեզ յայտնի այլ օրացոյցների միջեւ:

Վրաց, Աղուանից եւ Եգիպտական օրացոյցների ընդհանրութեան ակունքը գտնելու համար նախ գիտարկենք Անանիայի Տոմարի ստեղծմանը անմիջականօրէն նախորդած ժամանակների տոմարական ու քաղաքական դրութիւնը մեր տարածաշրջանում:

Գիտենք, որ 552ին աւարտուել էր Անդրէաս Բիւզանդացու կազմած 200ամեայ զատկացուցակը, որ ունէր համաքրիստոնէական կիրառութիւն¹²: Խնդիր էր առաջացել նոր զատկացուցակ-տօնացոյց ստեղծելու: Արեւմուտքում այդ խնդիրը լուծուել էր 9 տարի անց՝ 560-561ին Աղեքսանդրիացի 36 տոմարագէտների ժողովում, որ գլխաւորել էր իսա Աղեքսանդրացին: Այս ժողովի 36 մասնակիցները ընդունել էին 532ամեայ պարբերաշրջանը եւ դրա վրայ հիմնուած զատկացուցակը: Այս պարբերաշրջանը, որ դրանից չուրջ մէկ դար առաջ Հռոմում կիրառութեան մէջ էր դրուել Վիկտորիոս Արքուիտանացու կողմից եւ յայտնի էր Վիկտորեան շրջան, կամ Մհծ Ինդիկուիոն անունով, եկեղեցական տօների լրիւ կրկնման պարբերաշրջան էր, քանի որ հէնց 532 տարի պարբերութեամբ կրկնում էին ամիս-ամսաթուերի, աւուր պատկերների եւ Լուսնի փուլերի զուգագրումները¹³:

Աղեքսանդրիայի տոմարագէտների ժողովի մասնակիցներից անուանապէս յայտնի են՝

Փենեհեղ – Հրէաստանից (Տիբերիայից),
Գաբրիէլ – Ասորիքից,
Ցոհան – Արաբիայից,
Աբդիէ – Եթովպիայից,
Սերգի – Մակեդոնիայից,

12 ԱՂՍԹԵՆԱ, Ե., Ամդրէաս Բիւզանդացու երկուհարիւրամնայ տօնացոյցը եւ նրա հայերեն քարզմանութիւնը, – Բանքեր Երևանի Համալսարանի, 1979, 2, էջ 122-139:

13 Այս իրադարձութիւնները մանրամասն Ակարագրուած են Անանիայի երկերում: Տե՛ս ԱՆԱՆԻՍԹԻ ՇԻՐԱԿԱՅԻՆԻՑ ՀԱՄԱՐՈՂԻ մատնեմագրութիւնը, ՀԱՍԽ Մատենադարանի երատ, Երևան 1943, էջ 296: Տե՛ս նաև ԲՐՈՒՏԵՆԱ, Գ., Հայկական տոմարագիտութիւն, «ԷՄԻՒՔ-արեան երատակչութիւն», Երևան 2016, էջ 162-164:

**Եւղոգի – Յունաստանից եւ
Գիգան – Հռոմից^{14:}**

Անանիան յստակ նշում է, որ այս ժողովի մնացեալ մասնակիցները եղել են Եգիպտոսից^{15:} Ստացւում է, որ նշեալ 7 հոդուց զատ մնացեալ 29 մասնակիցները (36 – 7 = 29) եղել են Եգիպտոսից (այդ թւում եւ ժողովի գլխաւորը՝ իսա Աղեքսանդրացին):

Հայաստանեայց Եկեղեցին այս ժողովին չի մասնակցել: Պատճառը, բնականաբար, պիտի լինէր այն, որ տակաւին 551-552ին Հայոց Եկեղեցին լուծել էր իր օրացուցային խնդիրները, Մովսէս Եղիշվարդեցի Կաթողիկոսի (551-581) կարգադրութեամբ՝ ընդունելով Մշոյ Ս. Կարապետի վանահայր Աթանաս Տարօնացու կազմած նոր 95ամեայ Զատկացուցակ-տօնացոյցը^{16:} Փաստորէն, սկզբնաւորուել էր նոր 19ամեայ Լուսնի պարբերաշրջան: Միեւնոյն ժամանակ, սակայն, վերադիրների համակարգը ներդաշնակեցուած էր Անդրէաս Բիւզանդացու վերադիրների համակարգին, որին հաւատարիմ էին մնացել նաեւ Աղեքսանդրիայի ժողովի մասնակից տոմարագէտները: Մրա արդիւնքը եղել էր այն, որ թէ՛ աղեքսանդրեան ժողովի համակարգով, եւ թէ՛ Աթանասի կազմած զատկացուցակով զատիկների ամսաթուերը լրիւ ներդաշնակ են եղել իրար:

Արդ, յիշենք, որ այս օրացուցային կարգադրութեան ժամանակ Վրաց եւ Աղուանից Եկեղեցիները իբրև նուիրապետական կառոյցներ մտնում էին Հայաստանեայց Եկեղեցուց համակարգի մէջ: Վրաց բաժանումը Հայոց Եկեղեցուց եղել է Մովսէս Կաթողիկոսի մահից (581) շատ անց: Եւ դա եղել է բաւական

14 Անդ: Այս նոյնը համարեա նոյն խօսքերով կայ նաեւ Ցովիաննէս Սարկաւագի «Պատմութիւն Արքոյ Զատկին» երկում (ՅՈՎ.ՀԱՆՈՆԷՍ ԽՄԱՍՍԱ-ՍԵՐԻ Մատենագրութիւններ, աշխ. Աշոտ Արքահամեանի, Երևան 1956, էջ 273): Սա վկայում է, որ Սարկաւագ վարդապետը խմբրոյ առարկայ ժողովի մասին իր տեղեկութիւնները Քաղել է Անանիայի յիշեալ երկից: Այս ժողովի և նրա մասնակիցների մասին յետագայիլ բոլոր յիշատակումների առքիւրը դարձեալ Անանիայի երկն է: Այսինքն՝ ստացում է, որ Անանիան այս ժողովի մասնակիցների անունների միակ սկզբնադրիւրն է:

15 ԱՆԱՆԻԱՅԻ մատենագրութիւններ, Աշ. աշխ., էջ 296:

16 Այս ամենի մանրամասները տե՛ս ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Օրացոյց Հայոց, Աշխ., աշխ., էջ 61-96:

տեւական ու ցաւոտ գործընթաց: Խսկ Աղուանից կաթողիկոսութիւնը ե՛ւ այդ ժամանակ, ե՛ւ դրանից յետոյ եղել է Հայաստանեաց եկեղեցու նուիրապետական համակարգում: Միեւնոյն ժամանակ, ինդրոյ առարկայ տարիներին մարզպանական Հայաստանը¹⁷, Վիրքն ու Աղուանքը Սասանեան տէրութեան առանձին վարչա-քաղաքական միաւորներ էին: Աւելին՝ գիտենք նաեւ, որ Մեծ Հայքից որոշ նահանգներ անջատուած ու միացուած էին երկու հարեւան՝ Վրաց եւ Աղուանից մարզպանութիւններին, որոնք, այսպիսով, ընդարձակուած եւ հօրացուած էին ի հաշիւ (հնարաւոր է նաեւ՝ մասամբ ի հակակլիւ) Հայաստանի:

Աղեքսանդրիայի ժողովի մասին էլ գիտենք, որ Հակառակ այդ ժողովին Հայերի չմասնակցելուն, ժողովը քննարկել է Հայոց օրացոյցի հարցը, ընդ որում խոտանել է 9 տարի առաջ Աթանաս Տարօնացու ստեղծած Հայկական ինքնուրոյն զատկացուցակ-տօնացոյցը եւ կազմել-սահմանել է մի այլ օրացոյց Հայոց համար (որն էլ, բնականաբար, ընդունելութեան չի արժանացել Հայաստանում):¹⁸ Բնականաբար Հարց է առաջանում, թէ ի՞նչը կարող էր լինել Հայկական ինքնուրոյն օրացոյցի նկատմամբ այսքան բացասական վերաբերմունքի պատճառը: Այս հարցին ի պատասխան հնարաւոր է նշել երկու հանդամանք:

ա. Բանն այն է, որ այդ ժամանակներում շատ բարդ խընդիր էր համարում Զատիկ հաշուելը: Խօսքը վերաբերում է Հը-

17 Սա, փաստօրէն, Արեւելիան Հայաստանն էր, իսկ Արեւմտեան Հայաստանն այդ ժամանակ մտցուած էր Բիւրանդական կայսրութեան կազմի մէջ:

18 Այս մասին տես ԱՆԱՆԻՍ. ՇԻՐԱԿԱՑԻ, Տիեզերագիտութիւն եւ տոմար, Հայպետիրատ, Երևան 1940, գլ. ԶԲ, էջ 89: Թէպէս սոյն տեղում ուղղակի նշուած չէ, որ այդ ժմբուրքիւնը եղել է Աղեքսանդրիայի ժողովում, այդուհանդեռ եղելով նրանց, որ այդ տեսակ ժմբուրքիւն եւ նոր օրացոյցի սահմանադրութանքը կրասան կարող էր լինել կատարել միայն տոմարագիտների հեղինակաւոր ժողովը, բնական է նշուած ժմբուրքիւնն ու առաջարկը վերաբերի հեց Աղեքսանդրիայի ժողովին, քանզի նշուած ժամանակներում մեր տարածաշրջանում այլ տոմարագիտական ժողով յայտնի չէ: Ինչ վերաբերում է այն բանին, որ նրանց սահմանած տոմարն էլ Հայաստանում չի ընդունուել, սա էլ, թէպէտ դարձեալ ուղղակի վկայուած չէ, այդուհանդերձ սա բնական կերպացութիւն է, որ իրում է Հայոց օրացոյցի նախասարկաւագեան վիճակից: Մինչիւ Յովհաննես Սարկաւագը Հայաստանում կիրառուել է միայն Աքանասի սահմանած եւ Անամիայի բարեկիոյած օրացոյցը:

ոռմէական, կամ Եգիպտական, կամ նմանատիպ որեւէ անշարժ օրացոյցով Զատիկ հաշուելուն: Էլ աւելի բարդ պիտի լինէր Զատիկ հաշուելը մի օրացոյցով, որի տարուայ տեւողութիւնը անփոփոխ էր, իսկ ամսաթուերը շարժական էին: Իսկ հէնց այդպիսին էր այդ ժամանակ Հայկական օրացոյցը, որով եւ Աթանասը կազմել էր իր զատկացուցակը: Այսինքն, շարժական ամսաթուերով Հայկական օրացուցային աւանդոյթից հեռու Աղեքսանդրիացի տոմարագէտների համար Հայկական շարժուն ամսաթուերով Զատիկ հաշուելը, որ արել էր Աթանասը, անզատկերացնելի խնդիր պիտի լինէր: Բնականաբար, նրանք պիտի խոտանէին Աթանասի արածը եւ առաջարկէին այդ խնդրի աւելի պարզ լուծումը, որ յայտնի էր իրենց:

բ. Միւս պատճառը քաղաքական բնոյթի էր: Ինքնուրոյն զատկացուցակ-օրացոյց ստեղծելով, Հայոց Եկեղեցին, փաստօրէն, տոմարական առումով անկախանում եւ անջատում էր մնացեալ Եկեղեցիներից: Ջմուանանք, որ սա եղել է Քաղկեդոնի ժողովից շուրջ 100 տարի անց, երբ արդէն առկայ էին գաւանական տարաձայնութիւնները Հայոց եւ արեւմտեան Եկեղեցիների միջեւ: Բնականաբար, Հայոց Եկեղեցու անկախացումը չէր կարող խրախուսուել միւս Եկեղեցիների կողմից: Առանց Հայաստանեաց Եկեղեցու պաշտօնական ներկայացուցչի մասնակցութեան Հայկական օրացոյցի քննութիւնը եւ Հայոց համար նոր օրացոյցի կազմումը նշանակում է որոշակի միջամտութիւն Հայոց ինքնիշխան Եկեղեցու ներքին գործերին: Բնականաբար, այսպիսի միջամտութեան համար հարկ էր ունենալ ծանրակշիռ «Հիմքեր»: Ահա այս տեսանկինից 9 տարի առաջ Աթանասի կազմած Հայկական ինքնուրոյն տօնացոյցի «խոտանումը» կարող էր ծառայել իբրեւ այսպիսի միջամտութեան բաւարար «Հիմնաւորում»: Իբրեւ մի հնարաւոր երրորդ «Հիմք» էլ, թերեւս, կարելի է նշել հետեւեալը.

գ. Ինչպէս գիտենք, Աթանասի կազմած Հայկական նոր զատկացուցակ-օրացոյցը պարունակել է ընդամէնը 95 տարիների զատկացուցակ: Մինչդեռ Աղեքսանդրիայի ժողովը ընդունել էր 532ամեայ պարբերաշրջանը եւ իր կազմած նոր զատկացուցակ-ները (տարրեր ազգերի համար) հիմնել էր հէնց այդ («յակրտական» համարուող) պարբերաշրջանի վրայ: Անշուշտ, Աթանասի 95-ամեակը այս առումով էապէս զիջում էր էասեան 532ամեակին: Այս ե'ւ քիչ ժամանակ էր ընդգրկում, ե'ւ էլ «մշտնշենական» չէր: Ահա, հնարաւոր է, Աթանաս Տարօնացու կազմած հայկական ինքնուրոյն զատկացուցակը խոտանելու «Հիմքերից» մէկն էլ ե-

Դաժ լինի վերջինիս 532ամեայ չլինելը եւ համեմատաբար փոքր ժամանակամիջոց ընդգրկելը:

Բնականաբար, առաջանում են մի քանի հարցեր.

ա. ի՞նչ տիպի է եղել Հայոց համար աղեքսանդրացիների սահմանած օրացոյցը,

բ. արդեօք միայն Հայոց օրացոյցի հարցն է քննարկուել այդ ժողովում, եւ եթէ ոչ, ապա ո՞ր այլ ազգերի օրացոյցների իննդիրն է քննարկուել այնտեղ:

Այս հարցերից երկրորդի պատասխանը համեմատաբար դիւրին է գտնել: Սկսենք նրանից, որ Հայոց կողմից այդ ժողովին չմասնակցելը եւ Հայոց պաշտօնական ներկայացուցչի բացակայութեամբ Հայոց օրացոյցի հարցի քննարկումն արդէն իսկ վկայութիւն են որոշակի հակառակութեան: Այսինքն՝ եղել է ինչ-որ հակառակութիւն Հայոց Եկեղեցու եւ Աղեքսանդրիայի ժողովին մասնակցած այլ Եկեղեցիների միջեւ (իրանք են. Եգիպտական, Հրէական, Ասորական, Արաբական, Եթովպական, Մակեդոնական, Յունական եւ Հումէական Եկեղեցիները): Եթէ Հայաստանեայց Եկեղեցու ներկայացուցչի բացակայութեամբ քննարկուել է Հայոց օրացոյցի հարցը, ապա ընական է ակնկալել, որ այդ քննարկուները քննութեան առնէին նաեւ Հայաստանեայց Եկեղեցու նուիրապետական կառոյցի մէջ եղած այն Եկեղեցիների օրացոյցների խնդիրը, որոնք գործում էին Հայաստանից առանձին վարչական միաւորների մէջ: Այս առումով, հասկանալի է, որ նրանք պիտի քննէին թէ՛ Վրաց, եւ թէ՛ Աղուանից Եկեղեցիների տոմարների հարցը:

Բնական է, որ Վրաց եւ Աղուանից Եկեղեցիները եւս չէին կարող պաշտօնական ներկայացուցիչներ ունենալ Աղեքսանդրիայի տոմարագէտների ժողովում, քանի որ նրանք գործում էին Հայաստանեայց Եկեղեցու նուիրապետական համակարգի մէջ, իսկ վերջինս էլ անտես էր առել այդ ժողովը: Այսինքն, թէկուզ զուտ կարգապահական-ենթակայական նկատառումներից ելնելով, նրանք չէին կարող մասնակից լինել այդ ժողովին:

Սա հաստատում է նաեւ այդ ժողովի մասնակիցների ցուցակով, որ տալիս է Անանիան:

Գալով մեր առաջին հարցին՝ այսակեղ պատասխանը պարզ է դառնում, երբ դիտարկում ենք Աղեքսանդրիայի ժողովի մասնակիցների կազմը եւ համադրում դա «եղիպտական» խմբի օրացոյցների ցուցակի հետ: Այս խմբի օրացոյցներն են, Եգիպտա-

կանից զատ՝ Եթովպական, Աթենական, Բիւթանական, Կապառովկիական, Վրացական եւ Աղուանական օրացոյցները: Եթէ այս ցուցակից դուրս հանենք Եգիպտացիներին, որոնք կազմել են ժողովի մասնակիցների 80%-ը եւ Եթովպացիներին, որոնք վերջիններիս հետ անմիջական հարեւաններ են, մնացեալը այն ազգերն են, որոնք եւս, ինչպէս Հայերը, չեն մասնակցել Աղեքսանդրիայի ժողովին: Մտացւում է, որ Եգիպտականի հետ միեւնոյն խմբի մէջ են ընդգրկուած այն ազգերի օրացոյցները, որոնք չեն մասնակցել Աղեքսանդրիայի ժողովին:

Սա նշանակում է, որ այդ ժողովը մասնակցող ազգերի օրացոյցները քննել եւ կարգաւորել է նրանց ներկայացուցիչների մասնակցութեամբ, բնականաբար՝ հաշուի առնելով նրանց պահանջները: Այսինքն՝ հաշուի են առնուել ժողովին մասնակցող ազգերի օրացոյցների առանձնայատկութիւնները (տարեմուտի դիրքը եւն): Իսկ բացակայ ազգերի օրացոյցները ժողովը քննել է միասնաբար, առանց հաշուի առնելու այդ ազգերի օրացուցային պահանջները եւ տուել է մէկ միասնական լուծում այդ բոլորի համար¹⁹: Եթէ ասուածին յաւելնենք նաեւ այն, որ նշեալ ժողովի 36 մասնակիցներից միայն 7ն են եղել այլազգի, իսկ 29ը եղել են Եգիպտացիներ, ապա բնական է, որ ժողովը (այսինքն՝ Եգիպտացիները) բոլոր նոր օրացուցային նախագծերն էլ պիտի կազմէր՝ հիմք ընդունելով հէնց Եգիպտական օրացոյցը: Այս եղրակացութեան օգտին է խօսում Սամուէլ Անեցու երկում պահպանուած վկայութիւնը: Իր տոմարական երկում նա գրում է. «Հայք առանձին նահանջ կարգեցին, զոր ոչ գովեցին ներհունիք արհեստին: Այլ սահմանեցին նոքա տումար մերոյ ազգին անշարժելի, որպէս եւ այլոց ազգաց, որ գտանի կարգեալ ի մեծեն Սարկաւագէ»²⁰: Այսպէս, Սամուէլ Անեցու այս վկայութեան համաձայն՝ Ա-

-
- 19 Այստեղ բաց է մնում Պարսկական օրացոյցի հարցը: Թէպէտ մեզ հասած ցուցակից երեւում է, որ Պարսկական Եկեղեցին նյնապէս պաշտօնական ներկայացուցիչ չի ունեցել Աղեքսանդրիայի ժողովում, այդուհանդերձ, Պարսկական օրացոյցը չի մտնում «Եգիպտական» խմբի մէջ եւ առանձին է մնացեալ օրացոյցներից: Սրանից հետեւում է, որ Պարսկաց Եկեղեցին եւս իր օրացոյցի հարցը լուծած է եղել Աղեքսանդրիայի ժողովից առաջ, եւ այդ լուծումն էլ լիովին ընդունելի է եղել այս ժողովի մասնակիցների համար:
- 20 ԱԲՌԱՀԱՄԵԱՆ, Ա., Սամուէլ Անեցու տոմարական եւ տիեզերագիտական աշխատութեան մէջ, էջ 38: (Ընդգծումը – Գ. Բ.):

ղեքսանդրիայի ժողովի կողմից Հայոց համար սահմանուած օրացցը կիրառութեան մէջ է դրել («կարգեալ» է) Սարկաւագ վարդապէտը: Անշուշտ, սա չի նշանակում, թէ Սարկաւագի ստեղծած հայկական անշարժ օրացոյցը հեղինակային չէ, այլ ընդամէնը կիրառութիւնն է իրենից հինգ ու կէս դար առաջ աղեքսանդրացիների կողմից ստեղծուած օրացոյցի²¹: Սակայն սա նշանակում է, որ ըստ Սամուէլ Անեցու՝ նորաստեղծ Սարկաւագի կարգը²² պիտի եղած լինի նոյն տիպի օրացոյց, ինչպիսին եղել է Աղեքսանդրիայի ժողովի սահմանած հայկական օրացոյցը: Հաշուի առնելով, որ Սամուէլը եղել է Ցովհաննէս Սարկաւագի աշակերտը՝ հարկ է մտածել, որ այսպիսի պնդման համար նա պիտի ունեցած լինի շատ աւելի լուրջ հիմք, քան անձնական ենթագրութիւնն է, կամ նոյնիսկ՝ անձնական եզրակացութիւնը: Աւելի հաւանական է, որ տուեալ պնդման համար Սամուէլ քահանան իբրեւ հիմք ունեցած լինի հէնց իր ուսուցչից՝ Սարկաւագ վարդապէտից ստացած ուղղակի տեղեկութիւնը (այսու՝ հարկ է այն համարել արժանահաւատատ):

Այսպէս, ստանում ենք բացատրութիւնն այն հարցի, թէ ո՞րտեղից է գալիս եղիպատական խմբի օրացոյցների տարեմուտերի եւ ամսամուտերի ընդհանրութիւնը: Այս ընդհանրութեան պատճառն այն է, որ այս խմբի օրացոյցները (ի բաց առեալ հէնց եղիպատականն ու եթովպատականը) ստեղծուել են տոմարագէտների Աղեքսանդրիայի ժողովի կողմից՝ համապատասխան երկրներից պաշտօնական ներկայացուցիչների բացակայութեան պայմաններում:

-
- 21 Սարկաւագի կողմից նոր անշարժ օրացոյցը ինքնուրոյնաբար ստեղծուած լինելու վկայութիւն կարելի է համարել նրա քերած մանրամասն տեղեկութիւններն այն մասին, թէ ինչպես է ինքը որոշել իր ստեղծելիք օրացոյցի տարեմուտի՝ նաւասարդի լի դիրքը: Այս մասին նա մանրամասն գրում է Սարգսին ուղղուած նաև կում եւ Հայոց ամբաների գուգընթացութեան մասին իր երկում:
- 22 Ցովհաննէս Սարկաւագի ստեղծած օրացոյցը եղել է Ցովհաննի տիպի՝ 30օրեայ 12 ամիսներով եւ 5 յաւելեալ օրերով, որ դրուել են տարուայ վերջին: Զորս տարին մէկ էլ եօթներորդ ամսի՝ Մեհեկանի վերջում նահանջի լրացուցիչ օրն է աւելացուել Սրեալ ամսի սկզբից առաջ, եւ նահանջի լրացուցիչ օրն է աւելացուել Սրեալ ամսի սկզբից առաջ, եւ նիմին դիրքը համապատասխանել է Հռոմեական Ցովհանն օրացոյցի Մարտի 8ին: Տարեմուտն էլ եղել է նաւասարդի լը, որ միշտ գուգակշին է եղել Օգոստոսի 11ին:

ինչ վերաբերում է Վրաց եւ Աղուանից օրացոյցներին, այն տեսքով, ինչպէս դրանք ներկայացուած են Անանիայի Տոմարում, ապա դրանք ստեղծուած պիտի լինեն 561ին Աղեքսանդրիայի ժողովի կողմից, եւ դրանով է պայմանաւորուած նրանց տարեմուտերի համընկումը Եգիպտական օրացոյցի տարեմուտին՝ 0-գոստոսի 29ին:

Այստեղ հարց է առաջանուած. իսկ ինչո՞ւ Վրաց Քրոնիկոնի թուականը չի սկսուած այդ նոյն ժողովի տարուց, այլ դրանից 220 տարի անց՝ 781ին Օգոստոսի 29ից:

Տուեալ հարցի երկու կէսերն ունեն տարբեր պատասխաններ:

Առաջին. Աղեքսանդրիայի ժողովի տարուած տակաւին չէր եղած Վրաց բաժանումը Հայոց Եկեղեցուց: Վրաց Եկեղեցին ուրշակի իմաստով Հայաստանեաց Եկեղեցու մասն էր: Ուստի՝ անկարելի է պատկերացնել, որ Հայոց Եկեղեցու մի մասը, որ է նրա կազմի մէջ մտնող Վրաց Եկեղեցին, որդեգրէլ մի օրացոյց, որ արտօնուած չէր Հայոց Եկեղեցու կողմից: Այսինքն՝ միանչանակօրէն ակնյայտ է, որ Աղեքսանդրիայի ժողովի ժամանակ կամ դրանից անմիջապէս յետոյ Վրաց Եկեղեցին չպիտի կարողանար ինքնուրոյն օրացոյց ու տարեհաշիւ սկսել: Յաւելնք, որ Աղեքսանդրիայի ժողովը եղել է Հայոց Մովսէս Բ. Եղիպարղեցի կաթողիկոսի օրօք, եւ այդ ժողովից յետոյ դեռ 20 տարի հայրապետական գահին էր Մովսէս Կաթողիկոսը, եւ հէնց նա էլ իր ձեռքով ձեռնադրել եւ օծել էր Վրաց Կիւրիոն Կաթողիկոսին (որ Մովսէսի մահից որոշ ժամանակ անց սկսեց Վրաց Եկեղեցու անջատման գործընթացը): Բնականաբար, մինչեւ Մովսէսի մահը եւ դրանից յետոյ էլ մի առ ժամանակ անկարելի է պատկերացնել Վրաց կողմից օրացուցային տարամիուում Հայոց հետ:

Երկրորդ. Վրաց Քրոնիկոնը հէնց 781ին սկսուելը հնարաւոր է բացարեկ՝ ընդունելով, որ հէնց այդ թուականին է վերջնականապէս կանոնակարգուել, աւարտուել Վրաց բաժանումը եւ տոմարական անջատումը Հայոց Եկեղեցուց: Հաւանական է, սա կապուած է նաեւ նրա հետ, որ 726 թուականին տեղի ունեցաւ Մանազկերտի Եկեղեցական ժողովը, որ վերջնականօրէն անջատեց Հայաստանեաց Եկեղեցին քաղկեդոնականներից, որով եւ առաւել յստակեցուեց Վրաց բաժանումը Հայոց Եկեղեցուց: Հստայամ, հարկ է համարել, որ 781ը Վրաց նոր (քաղկեդոնական) զատկացուցակի անցնելու թուականն է:

Վրաց օրացոյցի եւ ինքնուրոյն տարեհաշուկ ծագմանը վերաբերող հարցերին պատասխան տալուց յետոյ հարկ է պատասխանել նաեւ այն հարցին, թէ ի՞նչ կերպ է հնարաւոր բացատրել Աղուանից ինքնուրոյն տարեհաշուկ-թուականի չգոյութիւնը: Իրոք, գիտենք, որ կայ Վրաց Քրոնիկոնի թուականը՝ Փրկչ 781ի Օգոստոսի 29ից սկսուող տարեհաշուով: Բնականաբար, սպասելի պիտի լինչը ունենալ նաեւ Աղուանից ինչ-որ ինքնուրոյն թուական-տարեհաշիւ: Սակայն նման բան մեզ յայտնի չէ: Ի՞նչը կարող է լինել սրա պատճառը: Հիմք չունենք ենթադրելու, թէ բռն աղուանական մշակոյթի աղքատիկ ժառանգութեան մնացեալ մասի հետ կարող է կորած լինել նաեւ ինչ-որ ժամանակ գոյութիւն ունեցած Աղուանից տարեհաշիւը: Սրան հակառակ՝ լիովին բնական է Աղուանից ինքնուրոյն տարեհաշուի գոյութիւն չունենալը, եթէ ի նկատի ունենանք, որ Աղուանից Եկեղեցին մինչեւ վերջ մնաց Հայաստանեայց Եկեղեցու նուիրապետական համակարգի մէջ: Ցայտնի է, որ օրացոյցն ու զրանից ածանցուող տարեհաշիւը խնդրոյ առարկայ ժամանակներում բացառապէս կրօնական կառոյցների իրաւասութեան մէջ էին: Լիովին հասկանալի է, որ չէր կարող Հայաստանեայց Եկեղեցու նուիրապետական կառոյցի մէջ գտնուող որեւէ (թէկուզ կիսանկախ) կառոյց իր համար առանձին ինքնուրոյն տարեհաշիւ-թուական ստեղծել՝ չունենալով իր գերագահ Հայաստանեայց Եկեղեցու համաձայնութիւնը: Այդպիսի քայլով նա պիտի հակադրուէր իր մայր Եկեղեցուն: Խսկ նման համաձայնութիւն լինել չէր կարող, քանի որ վերը շարադրուածից ակնյայտ է, որ հակառակ Հայաստանի քաղաքական մասնատուածութեանը, Զ. դարի հէսերին Հայաստանեայց Եկեղեցին տակաւին բաւական հզօր կառոյց էր, որ ի գօրու էր իր շահերը պաշտպանել նոյնիսկ ընդդէմ արեւելեան եկեղեցիների աղեքսանդրեան հեղինակաւոր տոմարագիտական ժողովի: Այսինքն, չքաժանուելով Հայաստանեայց Եկեղեցուց՝ Աղուանից Եկեղեցին պիտի կարիք էլ չընենար ինքնուրոյն տարեհաշիւ-թուական ստեղծելու: Այնպէս որ, Աղուանից ինքնուրոյն տարեհաշուի-թուականի չգոյութիւնը եւս մի հանգամանք է, որ գալիս է հաստատելու Վրաց եւ Աղուանից օրացոյցները Աղեքսանդրիայի ժողովում կարգադրուած-սահմանուած լինելը:

Սա նշանակում է նաեւ, որ Աղուանական տարեհաշիւը (թուականը) չէր կարող սկզբնաւորուած լինել Աղուանքում քրիստոնէութեան ընդունումից անմիջապէս յետոյ, քանի որ Աղուանից Եկեղեցին ի սկզբանէ եղել էր Հայաստանեայց Եկեղեցու նուիրապիայի ժողովում կարգադրուած-սահմանուած լինելը:

րապետական կառոյցի մասը։ Հետեւաբար, Աղուանական տարեհաշիւը (եթէ երբեւէ այն գոյութիւն ունեցել է) կարող էր ստեղծուած լինել միայն այդ երկրում քրիստոնէութեան ընդունումից առաջ։ Այս պարագայում էլ այդ տարեհաշուի կիրառութիւնը պէտք է աւանդով շարունակուէր նաեւ քրիստոնէութեան ընդունումից յետոյ (ճիշդ այնպէս, ինչպէս արեւմուտքում շատ երկար շարունակուել է Հռոմի հիմնադրման, օլիմպիադների, հիւպատունների եւ այլ թուականների կիրառութիւնը։ Քանի որ մենք չունենք Աղուանական տարեհաշուի կիրառութեան ոչ մի վկայութիւն, ուստի, բնական է եզրակացնել, որ այդպիսի տարեհաշիւ (թուականնութիւն, դարագլուխ) երբեւէ չի եղել։

Հարկ է պատասխանել եւս մէկ հարցի. երբուանից պիտի եղած լինի Աղեքսանդրիայի ժողովի սահմանած Վրաց եւ Աղուանից օրացոյցների կիրառութիւնը։

Վրաց տարեհաշուի պարագայում, ինչպէս վերը տեսանք, դա պիտի սկսուած լինի հէնց 781ին, ինքնուրոյն զատկացուցակի անցնելով։ Խոկ Աղուանից Եկեղեցին ինքնուրոյն տարեհաշիւնոյնիսկ չի էլ կիրառել։ Եթէ սրա հետ մէկտեղ հաշուի առնենք, որ տարեհաշիւը-թուականը (մեր դէպքում) բնականօրէն ծնունդ է առնում զատկացուցակից՝ իբրև դրա մէջ յաջորդական տարեների համարակալում²³, ապա կը ստանանք, որ Վրաց օրացոյցը Աղեքսանդրիայի ժողովի սահմանած ձեւով կիրառուած պիտի լինի հէնց Վրաց նոր զատկացուցակի սկիզբով, որ է՝ Քրոնիկոնի սկիզբը²⁴։

-
- 23 Անշուշտ, սա թուկանութեան-դարագլինի առաջցման միակ հնարաւոր ուղին չէ։ Յայտնի են այլ հանապարհերով թուականութեան առաջցման բազմաթիւ դէպքեր։ Այդուհանդերձ, մեզ հետաքրքրոյ ժամանակներում մեր տարածաշրջանում թուականութիւններն առաջացել են հենց այս թշուած հանապարհով։ Այս կիրայ են առաջացել Հայոց Մեծ թուականը Փրկէ. 552, Հայոց Փոքր թուականները 1084 և 1616։ Հենց սա էլ մեզ հիմք է տալիս համարելու, որ Վրաց թուականութեան առաջցումը եւս պիտի տեղի ունեցած լինելու այս նոյն հանապարհով։ Այսինքն, Վրաց թուականութեան առաջցումը պիտի կատարուած լիներ նոյն օրինաշափութեամբ, որով առաջացել էին այդ ժամանակների այլ դարագլուխները մեր տարածաշրջանում։
- 24 Ի դեպք այս նոյն ժամանակից եւ նոյն զատկացուցակի կիրառութեան մէջ դրուելով է ներկայացուած Վրաց օրացոյցի պատմութիւնը բոլորովին այլ տուեալների հիման վրայ։ Տե՛ս ԲԱԴԱԼԵՑՆ Հ. Ս., Օրացոյցի պատմութիւն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան 1970, էջ 170-172։

Գալով Աղուանից օրացոյցին, ապա մեզ մատչելի տուեալ-ները վկայում են, որ այն կարող էր ընդհանրապէս կիրառուած չլինել ճիշդ այնպէս, ինչպէս ստեղծուած-կիրառուած չի եղել Աղուանից ինքնուրոյն տարեհաշիւը, քանի որ, մնալով Հայաստանեայց Եկեղեցու նուիրապետական համակարգի մէջ, Աղուանից Եկեղեցին, բնականաբար, իր տօների ժամանակները որոշելու համար պիտի առաջնորդուէր հէնց Հայկական օրացոյցով: Սա էլ, իր հերթին, նշանակում է, որ վերանում էր սեփական օրացոյցի առանձին կիրառման անհրաժեշտութիւնը:

Արապէս, քանի որ Վրաց օրացոյցը կիրառուած չի եղել մինչեւ 781 թուականը, իսկ Աղուանից օրացոյցն էլ երբեւէ չի կիրառուել, բնականաբար հարց է առաջանում: ո՞րտեղից կարող էին այս օրացոյցների մասին տեղեկութիւնները յայտնուել Անանիայի մօտ, որ իր աշխատութիւնը գրել-աւարտել է 666-667 թուականներին:

Այս հարցին պատախանելու համար հարկ է յիշել, որ Անանիա Շիրակունին «Քննիլին» կոչուող իր կոթողային աշխատութիւնը շարադրել է Հայոց Անաստաս Ակոռեցի կաթողիկոսի յանձնարարութեամբ եւ հովանաւորութեամբ: Սա նշանակում է, որ իր այս հիմնարար երկի վրայ աշխատելու ընթացքում Անանիան պէտք է հնարաւորութիւն ունենար օգտուելու Հայոց Կաթողիկոսարանի դիւանից, որ միշտ էլ եղել է կաթողիկոսների իրաւասութեան տակ: Բնականաբար, նրան մատչելի պիտի լինէին Կաթողիկոսարանի դիւանի վաւերագրերը (առնուազն՝ դըրանց այն մասը, որ անմիջականօրէն աղերսւում էր օրացոյցի խնդիրներին): Իսկ Անանիայի ժամանակներում այդ դիւանում անպայման դեռ պիտի լինէին ընդամենը հարիւր տարի առաջ առաջանարկած Աղեքսանդրիայի ժողովին վերաբերող փաստաթղթերը, այդ թուում՝ թէ՛ ժողովի հաւաէրը (հնարաւոր է եւ՝ օրացուցային խնդրին վերաբերող նամակագրութիւնը) եւ թէ՛ ժողովի որոշումները: Եւ այս վերջինների մէջ էլ պիտի լինէին նաև Հայոց, Վրաց եւ Աղուանից (որպէս Հայոց Եկեղեցու նուիրապետական կառոյցի բաղադրիչների) Եկեղեցիների համար Աղեքսանդրիայում կազմուած օրացոյցների նախագծերը: Այսինքն՝ Անանիան լիովին հնարաւորութիւն ունէր Կաթողիկոսարանի դիւանից իմանալ Վրաց եւ Աղուանից՝ տակաւին չկիրառուող օրացոյցների մասին եւ ներկայացնել դրանք իր Տոմարում: Այս եզրակացութեան հետ լիովին ներդաշնակ է եւ այն, որ իր աշխատութեան մէջ Անանիան ներկայացնում է ժողովի մասնակից-

ների մանրամասն ցուցակը: Այդ կարգի տուեալներ նա կարող էր քաղել հինգ կաթողիկոսարանի դիւանում պահուող՝ Աղեք-սանդրիայի ժողովին վերաբերող պաշտօնական փաստաթղթերից:

Խնդրոյ առարկայ օրացոյցների վերաբերեալ համեմատական նօրէն լրիւ պատկերացում ունենալու համար հարկ է պարզել նաեւ այդ օրացոյցների ամիսների անունները (եւ, եթէ համարաւոր է՝ դրանց ծագումը):

Ամիսների անուանումների ծագումը եւ փոխառնչութիւնները հասկանալը հայ, վրացական (էլ չասած՝ աղուան) օրացոյցների պարագայում շատ դժուար է՝ ամիսների անունների ստուգաբանութեան հետ կապուած լուրջ խնդիրների պատճառով:

Ինչպէս ցոյց են տուել նախորդ Հետազոտողները, Վրաց օրացոյցի ամսանուններից որոշները կամ փոխառութիւն են համապատասխան հայկական անուններից, եւ կամ էլ՝ via-armeniaca²⁵:

Նախ նշենք, որ վրացական ամսանունները Անանիայի Տոմարում (եւ յաջորդ դարերի այն հեղինակների գործերում, որոնց համար սկզբնաղբեկը են եղել Անանիայի երկերը) որոյ դէպքերում տարբերում են վրացական աղբիւրներով մեզ հասած այդ նոյն ամիսների անուններից: Ասուածն առաւել ընկալելի լինելու համար ներկայացնենք այդ անունները աղիւսակով:

Վրաց ամսանունները ըստ Մաշտոցեան Մատենադարանի թիւ
1973 եւ 1999 ձեռագրերի եւ վրացական աղբիւրների²⁶

	ՄՄ 1973	ՄՄ 1999	Ըստ վրացական աղբիւրների
1	Ախալձերի	Ախձելի	Ախալձիսայ
2	Սքիլի	Սիրիլի	Սքուլիսայ
3	Տիրիսդին	Տիրիսքի	Տիրիսկանի

25 ՄՈՒՐԱԴԵԱՆ, Պ., Հայ-վրացական գրական-մշակութային փոխարարեալութիւնների պատութիւններից, Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», Հասարակական գիտութիւններ, 1964, № 10, էջ 55-68:

26 Այս աղիւսակի վերջին սիւնակի տուեալները վերցուած են Կ. Ս. Կեկելինեկի աշխատութիւնից. Կեկելինեկ, Կ. Ս., Հիմն վրացական գրականութեան պատութեան էտիւդներ, հ. 1, Թթվիւսի 1956, էջ 99-104 (վրացերէն): Վրացերէն շարադրաների ընթերցման եւ բարգմանութեան գործում ինձ օգնել է արեւելագէտ Ազատ Բողոյեանը որին եւ յայսնում եմ իմ խորին շնորհակալութիւնը: Տե՛ս Յանի ՄՈՒՐԱԴԵԱՆ, Պ., Աշ. աշխ.:

4	Տիրխսդինի	Տիրխսդենի	Տիրխադինի
5	Ապանի	Ապանի	Ապնիսի
6	Նուկլինի	Նումենի	Նուրծխնիսի
7	Մեկրանի	Նիկրանի	Միկրականի
8	Իգրիկա	Իգրակա	Իգրիկա
9	Վարդոպա	Վարդուպ	Վարդորիսայ
10	Տրելի	Մարիլի	Մարխալի
11	Քուրա	Քուրա	Թիրխսայ
12	Քուրաքալուրա	Քուրալուրա	Քուլեթորիսայ

ինչպէս աղիւսակից երեւում է, երկու դէպքում (Երդ եւ 11րդ) անունները իրարից տարբերուում են էապէս, իսկ մնացեալ դէպքերում տարբերութիւնները կարելի է համարել վրացերէնին չտիրապետող հայ հեղինակների կողմից վրացական բառերը հայերէն գրերով փոխանցելուց առաջացած աղաւաղումներ²⁷: Երդ եւ 11րդ ամսանունների էական տարբերութեան պատճառները առայժմ մնում են անհասկանալի՝ տեղեկոյթի անբաւարար լինելու պատճառով:

Բերուած աղիւսակում Տիրիսկանի (Յրդ), Տիրիսդինի (Գրդ), Միկրականի (Դրդ), Խգրիկա (Ծրդ) եւ Մարիալի (Որդ) ամսանունները համարում են ուղղակի փոխառութիւններ հայկական համապատասխան ամսանուններից։ Ախալծիսա (Իին) եւ Սբուլիսա (Հրդ) ամսանուններն էլ համարում են հայկական «նոր ժամանակ» նշանակող նաւասարդի (Իին) եւ «հունակի, ցորենքաղի ամիս, նաև ժամանակ» նշանակող Քաղոց (Ծրդ) ամսանունների իմաստակամ ժամանակ» Այս պնդման համար հիմք յին կրկնութիւն-թարգմանութիւններ։ Այս պնդման համար կիմք են ծառայում վրաց ամսանունների ստուգաբանութիւնները, որ արուել են Կ. Կեկիլիձի կողմից²⁸:

Միւնոյն ժամանակ, զերպ նշուած եօթ անուններով չի ա-
ւարտուամ Հայկական ամսանունների հետ ընդհանրութիւն ունե-
ցող վրացական ամսանունների ցանկը։ Այս ցանկին հարկ է յա-

27 Կարելի է սրան յաւելի նաև վրացական անոնների աղաւաղումները՝ յունաբենով դրանք շարադրելու ժամանակ, եթե հաշուի առնենք, որ Անանիայի համար իրեր և սկզբանադրի պիտի ծառայած լինեն Աղեք-Անանիայի համար իրեր և սկզբանադրի պիտի ծառայած լինեն Աղեք-Անանիայից ստացուած փաստարդները, որոնք, ամենայն հաւանական են ու համար:

28 Առքամասի, պէտք է միշտ ու

ւելել նաեւ Տիբիսա (11րդ) ամիսը, որի անունը, համաձայն Կ. Կեկելիձէի, նշանակում է «հարթ տեղանք, մարգ»: Սա կարելի է համարել հայկական 11րդ՝ Մարգաց ամսի անուան իմաստային թարգմանութիւն (Մարգացը հայերէն մարգ բառի յոդնակի թուի սեռական հոլովն է)²⁹:

Մնում են չորս ամիսների անուններ, որոնք ակնյայտ ընդ-հանրութիւն չունեն հայկական ամսանունների հետ: Դրանք են Ապանի (Ապնիսի) – 5, Նունկնի (Սուրծխնիսի) – 6, Վարդոպա (-Վարդորիսայ) – 9 եւ Քուրալուրա (Քուելթորիսայ) – 12: Այս անուններից վերջինի իմաստը կապում է հանգուցեալների հոգիներին նուերուած տօնի հետ³⁰: Իսկ սա, իր հերթին, ցուցում է առ այն, որ տուեալ ամիսը պէտք է առնչուած լինի Նախահայկեան օրացոյցի արտատարեկան ժամանակին, որ յաջորդում էր 10-ամսեայ տարուն, տեւում էր շուրջ 2 ամիս եւ աղերսուած էր Անդրաշխարհի, Ստորեկրայքի գաղափարին³¹: Անդրաշխարհին աղերսուող արտատարեկան ժամանակի պատկերացումը Նախահայկեան օրացոյցից յետոյ առկայ էր նաեւ Հայոց Հայկեան օրացոյցում: Իսկ Հայկեան օրացոյցն էլ կիրառուել է ն.թ. 2341 թը-ւականից մինչեւ Հայաստանում քրիստոնէկութեան պաշտօնական ընդունումն ու քրիստոնէական տօնացոյցի անցումը շուրջ 28 դար: Բականաբար, հէնց այդ ընթացքում էլ կարող էլ կարող էր տեղի ունեցած լինել խնդրոյ առարկայ (նաեւ միւս վրացական ամսանունների) փոխառութիւնը: Այսինքն, վրացական վերջին ամսի անուան իմաստը ցոյց է տալիս սերտ առնչութիւն Հայոց Նախահայկեան եւ Հայկեան օրացոյցների հետ: Երկու դէպքում էլ վերջին ամիսը աղերսուած է Անդրաշխարհի գաղափարին:

5րդ՝ Ապանի (Ապնիսի) ամսի անունը բղիեցւում է իրանական ապամ, կամ ապան (արմատը՝ «ար» – «ջուր») բառից³²:

29 Հայերէն «մարգ» բառը ունի մի քանի իմաստներ, որոնց շարքում կան «բռչուն» և «ածու» իմաստները: Վրացական զուգահեռող հենարաւորութիւն է տալիս նշգրտելու, որ գոնեւ խնդրոյ առարկայ օրացուցային փոխառութեան ժամանակ հայկական Մարգաց ամսի անունը ընկալուել է իրրեւ «մարգ-ածու», «մարգ» իմաստով բառից ծագած:

30 Կեկելիիջէ, Կ. Ա., Ծշ. աշխ.

31 Նախահայկեան օրացոյցի մասին տե՛ս ԲՐՈՒԽԵՍԱՆ, Գ., Հայոց տումարի որոշ հարցերի մասին, նախահայկեան օրացոյցի կառուցուածքը, «Աշմածին», ԺԲ, 1996, էջ 135-164, նաեւ՝ ԲՐՈՒԽԵՍԱՆ, Գ., Օրացոյց Հայոց, նշանական էջ 385-433:

32 Կեկելիիջէ, Կ. Ա., Ծշ. աշխ.

Երդ ամսի նունկնի անունը Անանիայի Տոմարում էապէստարքեր է այդ նոյն ամսուայ համար վրացական աղբիւրներում առկայ անունից (Սուրծխնիսի): Այս ամսի անուան առաջին տարբերակի համար (նունկնի – ըստ Անանիայի) որեւէ ստուգաբանութիւն մեզ յայտնի չէ: Երկրորդ տարբերակը (Սուրծխնիսի – ըստ վրացական աղբիւրների) բղխեցւում է «ջուր» նշանակող երկու արմատներից³³:

9-րդ՝ Վարդոպա (Վարդորիսայ) ամսի անունը ըստ Կ. Կեկելիիձէի առնշւում է «նոր» («նոր թերք», «նոր ժամանակ») հասկացութեան հետ³⁴: Սա հիմք ընդունելով, կարելի է հնարաւոր համարել, որ այս ամսանունը պէտք է կապուած լինի հայկական նաւասարդի («նոր ժամանակ», «նոր տարի») ամսի հետ: Հայոց նաւասարդի ամսի մասին էլ յայտնի է, որ այդ ամսի առաջին օրը տօնուել է «նոր պտղոց տօնը»³⁵:

Մնում են միայն 2 ամիսներ, որոնց անունների եւ հայկական օրացոյցների աղերսների մասին ոչինչ չենք կարող ասել, քանի որ չկան անհրաժեշտ տուեալներ դրանց ստուգաբանութեան վերաբերեալ: Այսպիսով, վրացական 12 ամսանուններից 10ը (83%) կամ պարզապէս փոխ են առնուած համապատասխան հայկական անուններից, եւ կամ ունեն լեզուական, իմաստային նոյնութիւն համապատասխան հայկական օրացուցային իրողութիւնների հետ:

Աղուանական ամսանունների մասին մեզ մատչելի տեղեկութիւնները չափազանց աղքատիկ են: Առայժմ Անանիայի Տոմարից զատ չկան այս անուանումների այլ աղբիւրներ: Աղուաներէն լեզուի չիմացութիւնից զատ աղուանական ամսանունների ստուգաբանութիւնը դժուար է նաեւ նրանով, որ, ինչպէս վրացական ամսանունների դէպօռում էր, այս պարագայում եւս կարող են լինել բառերի աղաւաղումներ՝ առաջացած աղուանական անուանումները յունարէն տառապարձելու եւ ապա յունատառ գը-

33 ԿեկելիԶէ, Կ. Ա., Թշ. աշխ.: Դժուար է պատկերացնել, թէ ի՞նչ կերպ կարող էր ամսուայ անունն առաջանալ միևնույն իմաստն ունեցող երկու տարբեր արմատներից: Ըստ այսմ, հարկ է շարունակել այս ամսակու տարբեր արմատներից: Ասկայի առայժմ այս ամսանուան համար այլ ստուգաբանութիւնն մեզ յայտնի չէ:

34 ԿեկելիԶէ, Կ. Ա., Թշ. աշխ.

35 ԱԳԱԹԱՆԴԵՂՈՍ, Պատմութիւն Հայոց, § 836, Երեւանի Համալսարանի հրատ., Երեւան 1983, էջ 464–466:

ըռութիւններն էլ հայերէն տառադարձելու ընթացքում։ Հակառակ այն բանին, որ այս անուանումները յոյժ կարեւոր են իբրև աղուաներէն լեզուի թանկագին մասունքներ, դրանք խիստ անբաւար են հետազոտուած։ Այս բնագաւառի մեզ յայտնի միակ հետազոտութիւնը էղ. Աղայեանի 1946 թ. աշխատութիւնն է³⁶։ Այսուղ աղուանական ամսանունների եւ ուտիերէն լեզուի (աղուաներէն լեզուի ենթադրեալ ժառանգի) բառերի համեմատութեան հիման վրայ հեղինակը ճշգրտել է ամիսների անունների իմաստները։ Մտորեւ աղիւսակով ներկայացուած են աղուանական ամսանունները եւ դրանց իմաստները³⁷։

Աղուանական ամսանունները եւ դրանց նշանակութիւնը³⁸

	Աղուանական ամիսները				Նշանակութիւնը
	ՄՄ 1999	ՄՄ 1973	ՄՄ 817	ՄՄ 2068	
1	Նաւասարդոն	Նաւասարդուն	Նաւասարդ[դ...]	Նօսարդոն	հայ. Նաւասարդից
2	Տուլեն	Տուեն	Տուլինի	Տուլինի	խաղողով, խաղողաբեր
3	Նամոց	Կամոց	Նամայ	Նամայ	խոնաւութեան
4	Ցիլի	Ցիլէ	Ցիլի	Ցիլի	սերմանեաց, սերմանելու
5	Բոկաւոն	Բոկաւոն	--	Բոկաւոն	այրեցող
6	Մարէ	Բինուկեն	Մարէ	Մարէ	հայ. Մարերի
7	Բոնկոնէ	Մրելի	Բոնկոն	Բոնկոն	
8	Ծախուլեն	Ծախուլի	Ծախուլէն	Ծախուլէն	
9	Բունդոկէ	Բոնդուկէ	Բոնտոկէ	Բոնտոկէ	

36 ԱՂԱՅԵԱՆ, Է., Աղուանական ամիսների անունները, «Տեղեկագիր» Հայկ. ՍՍՀ ԳԱ, Հասարակական գիտութիւններ, 1946, № 5, է 61-64։ Նոյն հեղինակի եղբակացութիւնները կրկնուած են նաև հետեւեալ աշխատութեան մէջ։ *The Caucasian Albanian Palimpsests of Mount Sinai*, Vol. I, Edited by Jost Gippert, Wolfgang Schulze, Zaza Aleksidze, Jean-Pierre Mahé, Brepols Publishers n. v., Turnhout 2008, p. II, 94-95։

37 Ամսանունների իմաստները տրում են ըստ էղ. Աղայեանի։ Տե՛ս ՁՇ. աշխ։

38 Այս աղիւսակում բերուած աղուանական ամսանունների աղբիւրների մասին բացատրութիւնը տե՛ս յօդուածիս սկզբնամասում։ Աղուանից ամիսների ցուցակին կից (ծան. 8)։

10	Որելին	Որելին	Որբելին	Որելին	
11	Եխնեա	Եխնա	Եխնէայ	Եխնէայ	հնաց
12	Խարնեա	Խիրնա	Խարայ	Խարայ	երից, երրորդ

Այս աղիւսակում երկու ամսանուն (լինն ու ճռզը) ուղղակի փոխառութիւն են հայկական համապատասխան ամսանուններից. Նաւասարդն (հայ. Նաւասարդի) եւ Մարէ (հայ. Մարերի). Եւս երկու ամսանուն իմաստային ընդհանրութիւն ունեն համապատասխան հայկական ամսանունների հետ: Դիտարկենք սրանք, սկսելով վերջինից:

Աղուանական 11րդ ամսի Եխնա անունը բացատրում է
իբրեւ «հունաքի [ամիս]: Յայտնի է, որ Հայկական օրացոյցի
11րդ ամիսը կոչւում է Մարգաց: Սա, ինչպէս վերը նկատուեց,
Հայերէն մարդ բառի յոդնակի թուի սեռական հոլովն է: Իսկ
մարդ բառն էլ, ի շարս այլ իմաստների, ունի նաև «ածու»,
«խոտհարթ», «խոտհունձ» իմաստները: Այսինքն, Հայկական Մար-
գաց ամսի անունը նշանակում է «ածուերի, խոտհարթների, հունա-
քի» եւ կամ «ածուներին, խոտհարթներին, հունաքին [վերաբերող]»:
Նշանակում է, եթէ ճիշդ է իդ. Աղայեանի առաջարկած ստուգա-
բանութիւնը, ապա աղուանական 11րդ՝ Եխնա ամսի անունը ի-
մաստով ամբողջովին համապատասխանում է Հայկական 11րդ
Մարգաց ամսի անունին:

Աղուանական Հրդ՝ Տուլեն ամսի անունը, ըստ Էդ. Աղայեանի, բացատրուում է իբրեւ «խաղող»: Ընդ որում, այդ նոյն արմատից հայերէն լեզուում կայ «տողի» բառը, որ նշանակում է «խաղողի ոքք, որթատունկ»³⁹: Վանայ բարբառում էլ պահպանուել է «տող» բառը «մի տեսակ խաղող» իմաստով⁴⁰: Առաջին հայեացքից սա ոչ մի ընդհանրութիւն չունի հայկական Հրդ ամսի հոռի անուան հետ⁴¹: Սրա հետ մէկտեղ մեզ է հասել գրաւոր

39 ՄԱԼԻՆԱՍԵՆՅԱՑ, Ս., Հայերէն Բացատրական բառարան, հ. 4, Հայկ. ՍԱՐԴԱՐԻԱՆԻ Պատհաւած, Երևան 1945, էջ 429:

40 Հայոց լեզուի բարբառային բառարան, հ. 6, ՀՀ ԳԱԱ. «Գիտուրին» հրատ., Երևան 2010, էջ 216:

41 Ի դեպ, վերը իշխանակուած իր աշխատութեան մէջ էդ. Աղայիանի ըն-
դունում է այն տևսակէտը, քէ Հայոց Հոռի ամսի անունը ծագում է
Վրացերէն «օրի» բառից, որ Եղանակում է «երկու»: Հայոց Հոռի ամսա-
նուած այսպիսի ստուգարանութիւն է Ընդունուած նաև Անտոնանի Սր-
մատական բառարանում (Ազգանուն, Հ., Հայերէն արմատական բա-

վկայութիւն այն մասին, որ Հայոց օրացոյցի 2-րդ ամիսը նախապէս կոչուել է Մատրան, սակայն յետոյ վերանուանուել է Հայկի (Հայոց նախնի Հայկ նահապետի) կողմից եւ կոչուել նրա որդու՝ Խոռի անունով⁴²: (Հոռի բառը հնարաւոր է ընդունել իբրեւ Խոռ (Հոռ/ր) անուան սեռական հոլով): Յատկանշական է, որ վկայաբերուած աղբիւրի մէջ Խոռը կոչուած է Հայկի «որդի»: Եւ, համաձայն մեզ հասած սկզբնաղբիւրների, Հայկ նահապետի Յ որդիներից մէկը կոչուել է Խոռ: Հայերէն «որդի» բառը արտասանուած է նաեւ «որդի»: Ըստ այսմ, հայերէն «որդի» բառը համանուն է «որդ» բառի հետ: Սրա հետ մէկտեղ՝ խաղողի բոյսը (վազը, տունկը) այլ անուններից զատ կոչուած է նաեւ «որդ»: Այսպիսով, զաւակ (որդի) եւ խաղողի բոյս (որդ) բառերը հայերէնուած ունեն միեւնոյն արտասանութիւնը՝ համանուններ են: Սա, իր հերթին, նշանակուած է, որ նախայբութենական հնագոյն գրային համակարգերուած այս բառերից մէկը կարող էր օգտագործուել միւսի նշանակման համար: Այսինքն, խաղողի որթատունկը (որթը) կարող էր օգտագործուել «որդի» (զաւակ) իմաստը արտայատելու համար, քանի որ «որդի» հասկացութիւնը աւելի վերացական է, քան խաղողի որթը, որ կարելի է դիւրութեամբ պատկերել նկարչական-գծագրական միջոցներով: Սա նշանակուած է, որ Աղուանից Տուլեն ամսանուան ստուգաբանութիւնը իբրեւ «խաղող» կարելի է հասկանալ նաեւ իբրեւ «որդի»: Սա էլ, իր հերթին, այս ամսուայ անունը նոյնիմաստ է դարձնուած Հայոց Հոռի ամսի անուանը (իբրեւ Հայկի որդի):

Աղուանական 4րդ՝ Ցիլի (Կամ Շիլի) ամսուայ անունը բացատրուած է իբրեւ աղուաններէն (ուտիերէն) «ցիլ» – «սերմ», «ցիղ» բառից ծագած: Այս հիման վրայ ամսանունը ստուգաբանուած է իբրեւ «ցանքսի», սերմնացանի [ամիս]»⁴³: Այսպիսի ստուգաբանու-

ուարան, հ. 3, Երեւանի Համալսարանի իրատ., Երեւան 1977, (առաջին հրատ՝ 1926) էջ 114-115): Սրան հակառակ՝ յետագյում Հոռի ամսանուան այսպիսի ստուգաբանութիւնը հիմնաւորապէս հերթուեց Ստ. Մալխանսեանի կողմից (ՄԱԼԽԱՍԵԱՆՑ, Ս., Հայերէն Բացասորական բառարան, հ. 4, էջ 176), իսկ աւելի ուշ այդ հերթումը ընդունելու էր նաև էղ. Աղայեանի կողմից (ԱՂԱՅԵԱՆ, է., Ակեմարկներ Հայոց տոմարմերի պատմութեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան 1986, էջ 58-59):

- 42 ԱԼԻՇԱՆ, Ղ., Հիմնաւոր կամ հերամսական կրօնք Հայոց, Վեճնտիկ, 1895, էջ 140: Այս մասին աւելի մանրամասն տես' ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Օրացոյց Հայոց, Եշ. աշխ., էջ 450-452:
- 43 Ռւտիերէն (աղուաններէն) «ցիլ» – «սերմ» բառը նոյնական է հայերէն «ծիլ» բառին, որի իմաստն է. «սերմի կամ հատիկի մէջ եղած սաղմը, որ ծը-

թեամբ աղուանական այս ամսի անունը դառնում է Հայկական 4րդ՝ Տրէ ամսի իմաստային հոմանիշը: Բանն այն է, որ Հայկական Տրէ ամսի անունը միանշանակ կապուած է Հայկական նախաքրիստոնէական Տիր աստծու անուանը: Իր հերթին, հացահատիկի աշնանացանը Հայաստանում կոչուել է Տրի ցանք: Հաշուի առնելով նաեւ այն, որ Հայաստանում պատմականօրէն կիրառուել է հացարոյսերի (ցորենի եւ գարու) մշակման յատկապէս աշնանացան եղանակը, սա կը նշանակի, որ հին հայկական օրացոյցում 4րդ ամիսը պէտք է եղած լինի հէնց ցանքսի ամիս: Այսպիսով, աղուանական 4րդ ամիսը նոյնպէս կոչուել է ցանքսի ամիս եւ, ըստ այսմ, հայկական եւ աղուանական 4րդ ամիսները անունները ըստ իմաստի հոմանիշներ են:

Ինչպէս երեւում է վերը բերուած աղիւսակից, աղուանական 12 ամիսներից 8ի անունները ունեն բացատրութիւններ: Այդ բացատրութիւններից 2ը հարցական են: Փոքր ի շատէ հաւաստի են 12ից 6ը: Աստ կատարուած քննութիւնը ի յայտ բերեց, որ 6 ամսանուններից 4ը (67%) այս կամ այն կերպ համընկնում են համապատասխան հայկական անուններին: Հաշուի առնելով այն, որ աղուանական ամիսների անունները մեծ հաւանականութեամբ մեզ են հասել լուրջ աղաւաղումներով, ստացուած 67 տոկոսը (2/3) կարելի է համարել աղուանական եւ հայկական ամիսների անունների համապատասխանութեան շատ բարձր ցուցանիշ: Այսինքն, կարելի է պնդել, որ մեծ հաւանականութեամբ աղուանական ամիսների անունների ճնշող մեծամասնութիւնը պէտք է համապատասխան լինի համապատասխան հայկական զուգահեռներին:

Ի մի բերելով Անանիա Շիրակունու երկերից մեզ հասած՝ Վրաց եւ Աղուանից օրացոյցներին վերաբերող փաստերի քննութեան արդիւնքները, ստանում ենք դրանց վերաբերող իրադարձութիւնների հետեւեալ ուրուագծային պատկերը:

552 թուականին Հայոց Եկեղեցին, ի դէմս Մովսէս Եղիվարդեցի կաթողիկոսի, կարգադրում է իր օրացուցային խնդիրները, որդեգրելով Աթանաս Տարօնացու կազմած զատկացուցակը: Ինը տարի անց 561ին իսա Աղեքսանդրացու գլխաւորութեամբ գումարուած Աղեքսանդրիայի տոմարագէտների ժողովը

լում է»։ տե՛ս ՄԱԼԽՍ.ՍԵԱՆՑ, Ա., Հայերէն Բացատրական քառարամ, հ. 2, 1944, էջ 336:

Հայոց, Վրաց եւ Աղուանից (նաեւ որոշ այլ երկրների) պաշտօնական ներկայացուցիչների բացակայութեամբ քննարկում է նաեւ ժողովին չմասնակցող ազգերի օրացոյցների խնդիրը եւ սահմանում առանձին օրացոյցներ նաեւ նրանց համար։ Այս բոլոր նորակազմ օրացոյցներն էլ եղել են իրար նման։ Դրանք եղիպատականի օրինակով կազմուած օրացոյցներ են եղել՝ իրար հետ համընկնող ամսամուտերով, տարեմուտերով ու նահանջներով։ Հայաստանեայց Եկեղեցին եւ նրա նույիրապետական համակարգում եղած Վրաց եւ Աղուանից Եկեղեցիները չեն ընդունում Աղեքսանդրիայի ժողովի ստեղծած օրացոյցները։ Զ. դարի վերջից սկիզբ է առնում Հայոց Եկեղեցուց Վրաց բաժանման գործընթացը, որ ի վերջոյ յանդեցնում է 781 թուականից նոր (քաղկեդոնական) զատկացուցակի անցնելու, որով եւ Վրացիք կիրառութեան մէջ են դնում Աղեքսանդրիայի ժողովի կողմից իրենց համար կազմուած օրացոյցը եւ սկսում իրենց նոր տարեհաշիւը՝ Քրոնիկոնը։

Աղուանից Եկեղեցին, մինչեւ վերջ մնալով Հայաստանեայց Եկեղեցու նույիրապետական համակարգի մէջ, երբեւէ չի անցնում այլ զատկացուցակի եւ չի ստեղծում ինքնուրոյն տարեհաշիւ. ամենայն հաւանականութեամբ չի էլ կիրառում Աղեքսանդրիայի ժողովի կողմից իր համար կազմուած օրացոյցը։ Այս վերջին Եղակացութիւնը աւելի քան հաւանական է, եթէ ի նկատի ունենանք նաեւ, որ Աղուանից Եկեղեցին գործել է աշխարհագրական առաւելապես համապատասխան կազմուած օրացոյցը։ Այս վերջին բնական ու բաւարար պիտի լինէր Հայկական օրացոյցի կիրառութիւնը։

Ամսանունների քննութիւնն էլ ցոյց է տալիս, որ Վրացական ամսանունների 83%ը եւ աղուանական ամսանունների 67%ը ուղղակի փոխառութիւններ են համապատասխան հայկական անուններից եւ կամ ունեն իմաստային ընդհանրութիւն դրանց հետ։

Summary

GEORGIAN AND ALOUANIAN CALENDARS AS PRESENTED IN ANANIA SHIRAKOUNI'S TOMAR (CALENDAR)

GRIGOR BROUTIAN

A comprehensive review of the information on Georgian and Alouan (concerning the Caucasian Albania) calendars preserved in Anania Shirakouni's works and reached to our days was done. It was shown that in 561 The Alexandrian Council of 36 calendarists created similar (Egyptian-type) calendars for nations not participating the Council. This included the calendars created for Armenians, Georgians and Alouans, which, however, were not accepted in Armenia, Georgia and Caucasian Albania. 781 Completing its separation from the Armenian Church, the Georgian Church has put into practice the calendar created for it by the Alexandrian Council 220 years ago and started a new aera (the aera of Gergian Khronicon). And the Church from Caucasian Albania, always remaining in the diocesan system of the Armenian Church, has never used the calendar created for it and has not had an independent area.

The examination of the names of the months also showed that 83% of the Georgian names of the months and 67% of the names of the Albanian months are direct borrowings from the corresponding Armenian names or have a semantic similarity with them.